



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2017թ.

N 5 - Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **առաջում է**.

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի գործունեության հիմնական միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

**ԾՐԱԳԻՐ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

N	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Կատարման հիմնական պատասխանատուն(երը)
<b>I. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում քննարկվելիք հիմնական հարցեր</b>			
1	1. Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ 2017 թվականի փետրվարի 20-ի հանրաքվեի նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի և ծախսերի նախահաշվի հաստատում	Հունվար-փետրվար	ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի (այսուհետ՝ ԿՀՀ) նախագահ
2	Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի և նախահաշվի հաստատում	Մարտ-ապրիլ, սեպտեմբեր-հոկտեմբեր	ԿՀՀ նախագահ, ԿՀՀ քարտուղար
3	2017 թվականին կայացած ընտրությունների արդյունքների ամփոփում	Դեկտեմբեր	ԿՀՀ նախագահ, ԿՀՀ նախագահի տեղակալ, ԿՀՀ քարտուղար
4	Տարածքային ընտրական հանձնաժողովների հաշվետվությունների ներկայացում 2017թ. գործունեության և խնդիրների մասին	Դեկտեմբեր	Տարածքային ընտրական հանձնաժողովների (այսուհետ՝ ՏարՀՀ) նախագահներ
<b>II. Միջոցառումների կազմակերպում</b>			
1	Թիվ 5 ընտրատարածքում ԼՂՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի լրացուցիչ ընտրությունների կազմակերպում և անցկացում	Փետրվար	ԿՀՀ նախագահ, ԿՀՀ քարտուղար, Ասկերանի ՏարՀՀ նախագահ
2	Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպում և անցկացում	Մարտ-ապրիլ, սեպտեմբեր-հոկտեմբեր	ԿՀՀ, ՏարՀՀ-ներ
3	Ընտրական հանձնաժողովների անդամների և անդամության թեկնածուների համար ուղեցույցի պատրաստում	Տարվա ընթացքում՝ ըստ ընտրությունների անցկացման գրաֆիկի	ԿՀՀ նախագահ, ԿՀՀ նախագահի տեղակալ, ԿՀՀ քարտուղար
4	Ընտրությունների վերաբերյալ տարբեր ուղեցույցերի, ժամանակացույցի և այլ տեղեկատվական նյութերի պատրաստում ընտրություններին առնչվող մարմինների և անձանց համար	Մարտ-ապրիլ, սեպտեմբեր-հոկտեմբեր	ԿՀՀ
5	Պետական արխիվ հանձնելու նպատակով պահպանման ենթակա փաստաթղթերի նախապատրաստում	Դեկտեմբեր	ԿՀՀ քարտուղար, ՏարՀՀ-ների նախագահներ
6	ԿՀՀ և ՏարՀՀ-ների գույքի և սարքավորումների գույքագրման աշխատանքների կազմակերպում	Դեկտեմբեր	ԿՀՀ գլխավոր հաշվապահ